# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 109

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 02-ը հոկտեմբերի 2020 թվականի թիվ 12 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 02 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 12 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի նախկին պահեստի շենքից 117 քմ մակերեսով առանձնացված տարածքը անհատույց օգտագործմամբ 1 /մեկ/ տարի ժամկետով «Մի բուռ Խաչիկ» գյուղատնտեսական կոոպերատիվին հատկացնելուն համաձայնություն տալու մասին :

3. Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխում կատարելուն համաձայնություն տալու մասին

4. Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 4819 հոդվածից 1.000.000/ մեկ միլիոն/ ՀՀ դրամ նվիրատվության կարգով Համահայկական հիմնադրամին հատկացնելուն համաձայնություն տալու մասին

5. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում գտնվող «ԷԸՐԸՆ ՍԵԴՐԻՔ ՐՈԼԻՆՍ» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքից առանձնացված 0.31825 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին

6. ՀՀ-ում ստեղծված ռազմական դրությամբ պայմանավորված բարերարների կողմից ուղարկված գումարները տնօրինելու՝ սննդի, դեղորայքի, հագուստի և այլ անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերման և բաշխման նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 110

### ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՀԵՍՏԻ ՇԵՆՔԻՑ 117 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ՄԵԿ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ՄԻ ԲՈՒՌ ԽԱՉԻԿ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով «Մի բուռ Խաչիկ» գյուղատնտեսական կոոպերատիվի գործադիր մարմնի ղեկավար, նախագահ Սոնա Մակարյանի դիմումը Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի նախկին պահեստի շենքից 117քմ մակերեսով առանձնացված տարածքը հատկացնել «Մի բուռ Խաչիկ» գյուղատնտեսական կոոպերատիվին՝ 1 /մեկ/ տարի ժամկետով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին.

ա) Գյուղատնտեսական կոոպերատիվի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր 1 /մեկ/ տարի ժամկետով,

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 111

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի՝ Արենիի այլ մշակութային միջոցառումներ գործառնական դասակարգման 08 բաժնի, 02 խմբի, 04 դասի 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածից պակասեցնել 1.000.000 ՀՀ դրամ և ուղղել Արենիի համայնքապետարանի ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01 բաժնի 03 խմբի 03 դասի 4819 /նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 112

### ԱԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 4819 ՀՈԴՎԱԾԻՑ 1.000.000 /ՄԵԿ ՄԻԼԻՈՆ/ ՀՀ ԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն 2020 թվականի տարեկան բյուջեից ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 4819 հոդվածից 1.000.000/ մեկ միլիոն/ ՀՀ դրամ նվիրատվության կարգով Հայաստան Համահայկական հիմնադրամին հատկացնելուն.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒՐԻԿ [illegible]**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 113

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԷԸՐԸՆ ՍԵԴՐԻՔ ՌՈԼԻՆՍ>> ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.67974 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.31825 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 31-րդ, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն «ԷԸՐԸՆ ՍԵԴՐԻՔ ՌՈԼԻՆՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,67974 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիր՝ 10-006-0253-0009, գործառնական նշանակությունը վարելահող) հողամասից առանձնացված 0.31825 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 114

ՀՀ-ՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ՝ ՍՆՆԴԻ, ԴԵՂՈՐԱՅՔԻ, ՀԱԳՈՒՍՏԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով ՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

*1.* Տալ համաձայնություն ՀՀ-ում ստեղծված ռազմական դրությամբ պայմանավորված բարերարների կողմից ուղարկված գումարները տնօրինելու՝ սննդի, դեղորայքի, հագուստի և այլ անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերման և բաշխման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1) Գևորգ Սիմոնյան - աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ

2) Լիանա Բաբայան - աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

3) Աստղիկ Խաչատրյան - աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ

4) Տվյալ բնակավայրի վարչական ղեկավար- հանձնաժողովի անդամ

5) Տվյալ բնակավայրից ընտրված ավագանու անդամ- հանձնաժողովի անդամ

*2.* Հանձնաժողովին՝

ա) ուսումնասիրել և գնահատել կարիքները

բ) ապահովել կարիքների նվազագույնը

գ) ներկայացնել պատշաճ հաշվետվություն գնված ապրանքների ձեռքբերման և բաշխման վերաբերյալ՝ կցելով անհրաժեշտ փաստաթղթեր

դ) հանձնաժողովի աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացումը վերապահել Արենի համայնքի ղեկավարին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**